Հաճախակի տրվող հարցեր

Կարմրուկ

1. Ի՞նչ է կարմրուկը:

Կարմրուկը ամենավարակիչ հիվանդություններից մեկն է, որն առաջանում է օդակաթիլային վիրուսից: Այս վիրուսն ապրում է վարակված անձի քթում ու կոկորդում և կարող է հեշտությամբ տարածվել մարմնի մյուս մասերում՝ ախտահարելով թոքերը, գլխուղեղը և այլ օրգաններ:

2. Ինչպե՞ս է կարմրուկը տարածվում:

Վիրուսը հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ հիվանդ մարդը շնչում, խոսում, հազում կամ փռշտում է: Վիրուսը կարող է մի քանի ժամ մնալ օդում և մակերեսների վրա, նույնիսկ երբ վարակված անձն արդեն գնացել է: Դուք կարող եք վարակվել՝ գտնվելով այն սենյակում, որտեղ հիվանդ անձն է եղել, կամ դիպչելով Ձեր աչքերին, քթին կամ բերանին՝ նրա ձեռք տված իրերին դիպչելուց հետո:

Տասը մարդկանցից 9-ը, ովքեր չեն պատվաստվել կարմրուկի դեմ, կհիվանդանան կարմրուկով, եթե շփվեն վիրուսի հետ: Կարմրուկով հիվանդ մարդը կարող է հիվանդությունը փոխանցել ուրիշներին նույնիսկ նախքան որևէ ախտանիշ ունենալը:

3. Որո՞նք են կարմրուկի ախտանիշները:

Կարմրուկի տարածված ախտանիշները ներառում են՝

- Բարձր ջերմություն (101°F-ից բարձր)
- Հազ
- Քթահոսություն
- Կարմրած արցունքոտ աչքեր
- Ցան, որը սկսվում է երեսից և տարածվում ամբողջ մարմնով

4. Որո՞նք են կարմրուկից առաջացած բարդությունները:

Կարմրուկը կարող է առաջացնել ականջի վարակներ, փորլուծություն, թոքաբորբ, էնցեֆալիտ (ուղեղի շուրջ այտուցվածություն) և նույնիսկ մահ: 5 տարեկանից փոքր երեխաները, հղի կանայք և թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ ավելի հավանական է, որ կունենան լուրջ առողջական խնդիրներ կարմրուկի պատճառով:

5. Ինչպե՞ս է բուժվում կարմրուկը:

Կարմրուկի բուժում չկա: Բուժումը կենտրոնանում է ախտանիշները թեթևացնելու վրա և լուրջ առողջական խնդիրները, որոնք կարող առաջանալ, կառավարելու վրա:

6. Ի՞նչ կարող եք անել կարմրուկը կանխելու համար:

Պատվաստվելը կարմրուկով վարակվելուց և այն տարածելուց խուսափելու լավագույն միջոցն է: Կարմրուկ-կարմրախտ-խոզուկի (ԿԿԽ, անգլերեն՝ MMR) պատվաստանյութը շատ անվտանգ է և ավելի քան 95%-ով արդյունավետ հիվանդությունը կանխարգելելու գործում: Մարդիկ պետք է ստանան ԿԿԽ (MMR) պատվաստանյութը, եթե նրանք պատվաստված չեն կամ չգիտեն՝ արդյոք նախկինում ստացել են ԿԿԽ (MMR) պատվաստանյութը, թե ոչ: Երեխաները պետք է պատվաստվեն 12-15 ամսականում և կրկին՝ 4-6 տարեկանում:

Գլխավոր կետեր

- Կարմրուկը վիրուս է, որն ապրում է քթում և կոկորդում:
- Կարմրուկը հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ վարակված անձը հազում կամ փռշտում է:
- Պատվաստումը լավագույն միջոցն է՝ կանխելու կարմրուկով վարակվելը և այն տարածելը:
- Հանրային Առողջությունը քայլեր է ձեռնարկում՝ կանխելու կարմրուկի տարածումը Լոս Անջելեսի Շրջանում:

Հավելյալ տեղեկությունների համար

Կարմրուկ՝
www.cdc.gov/measles/index.html

Պատվաստման ժամանակացույց, Հիվանդությունների Կանխարգելման և Վերահսկման Կենտրոններ (CDC)՝
www.cdc.gov/vaccines/schedules/

Պատվաստման պահանջներ դպրոց ընդունվելու համար՝
www.shotsforschool.org/

7. Ո՞ւր կարող եք գնալ պատվաստվելու համար:

Զանգահարեք Ձեր բժշկին, որպեսզի ստանաք ԿԿԽ (MMR) պատվաստանյութը, որի ծախսերը կարող է փակել Ձեր ապահովագրությունը: Եթե Դուք չունեք ապահովագրություն, Դուք դարձյալ կարող եք պատվաստվել դեղատանը կամ որևէ կլինիկայում, որն առաջարկում է անվճար կամ ցածր արժեքներով պատվաստումներ: Այցելեք publichealth.lacounty.gov/ip/clinics.htm կամ զանգահարեք 2-1-1՝ անվճար կամ ցածր արժեքներով կլինիկաների ցանկի համար:

8. Ի՞նչ պետք է Դուք անեք, եթե կարծում եք, որ հնարավոր է, որ կարմրուկ ունեք:

Եթե կարծում եք, որ Դուք կամ Ձեր ընտանիքից որևէ մեկը շփվել է կարմրուկի հետ կամ կարմրուկ ունի, անմիջապես դիմեք Ձեր բժշկի գրասենյակ: Նախքան գնալը ասացեք նրանց, որ հնարավոր է, որ Դուք կարմրուկ ունենաք, որպեսզի նրանք կարողանան միջոցներ ձեռնարկել այլ հիվանդների և անձնակազմի հետ շփումը կանխելու համար:

9. Ինչո՞ւ են վերջերս կարմրուկի դեպքերը շատացել նորություններում:

Միացյալ Նահանգներում (ԱՄՆ) մարդկանց մեծ մասը պաշտպանված է կարմրուկից պատվաստումների միջոցով: Հնարավոր է, որ ԱՄՆ-ում սովորականից ավելի շատ դեպքեր են գրանցվում, քանի որ ավելի շատ մարդիկ են ճամփորդում կամ մեկնում այնպիսի վայրեր, կամ գալիս այնպիսի վայրերից, որտեղ կարմրուկն ավելի տարածված է:

10. Ի՞նչ է անում Հանրային Առողջության Վարչությունը՝ կարմրուկը կանխելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունն աշխատում է, որպեսզի կանխի մարդկանց վարակվելը և հիվանդության տարածումը՝

- Քննելով շրջանում կարմրուկի բոլոր դեպքերը, որպեսզի ապահովի դեպքերի կառավարումը և բացահայտի, թե ով է շփվել վարակված անձի հետ:
- Գտնելով այն մարդկանց, ովքեր կապ են ունեցել կարմրուկով հիվանդի հետ, ստուգելով նրանց անվարակունակության կարգավիճակը և հետևելով ախտանշաններին, որպեսզի կանխվի հիվանդության հետագա տարածումը:
- Սովորեցնելով բուժաշխատողներին կարմրուկի ախտանիշները, ախտորոշումը և դրանք զեկուցելը:
- Ձեռնարկելով անվտանգության միջոցներ, օրինակ՝ ԿԿԽ (MMR) պատվաստանյութեր տրամադրելով և/կամ սահմանափակելով չպատվաստված այն մարդկանց մասնակցությունը դասերին կամ աշխատանքներին, որոնք հնարավոր է, որ շփված լինեն կարմրուկի հետ:

Ցանկանո՞ւմ եք ավելին իմանալ բռնկման և դեպքերի մասին

Ներկայիս դեպքերի մասին տեղեկությունների համար այցելեք՝

Հիվանդությունների Կանխարգելման և Վերահսկման Կենտրոններ (CDC)՝
www.cdc.gov/measles/cases-outbreaks.html

Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչություն (CDPH)՝
www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/measles.aspx

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (WHO)՝
www.who.int/data/gho/data/indicators/indicator-details/GHO/measles---number-of-reported-cases